



[Handwritten signature]

[Handwritten signature]

Փոստային կապի ծառայությունների վճարովի
մատուցման պայմանագիր

**Contract
on Provision of Payable Postal Services**

«ՀԱՅՓՈՍ»

“HAYPOST”

Փակ Բաժնետիրական Ընկերություն

Closed Joint Stock Company

և

and

ՀՀ ԿԱ Միջուկային անվտանգության
կարգավորման պետական կոմիտե

State Nuclear Safety Regulatory Committee by
the Government of the RA

Սարյան 22, Հայփոստ

22 Saryan Str, Haypost

Երևան,

Yerevan,

Հայաստանի Հանրապետություն

Republic of Armenia

Փաստաթղթի տեսակը	Համարը	Կնքման ամսաթիվը	Document Type	Number	Signing date
POSTAL	PD-149-03-17	16.03.2017թ.	POSTAL	PD-149-03-17	16.03.2017

«ՀԱՅՓՈՍ» փակ բաժնետիրական ընկերությունը, որը կազմավորվել է Հայաստանի Հանրապետության օրենքներին համաձայն, գրանցված է և գտնվում է Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան 0002, Սարյան 22 հասցեում և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության փոստային կապի ազգային օպերատոր (այսուհետև սույն պայմանագրի իմաստով՝ Կատարող կամ Ընկերություն)՝ ի դեմս գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնակատար Հայկ Ավագյանի, մի կողմից, և ՀՀ ԿԱ Սիջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեն (այսուհետև սույն պայմանագրի իմաստով՝ Պատվիրատու կամ Հաճախորդ)՝ ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Խաչատուր Խաչիկյանի, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

Գլուխ 1. Պայմանագրի առարկան

- 1.1 Կատարողը (Ընկերությունը) պարտավորվում է սույն պայմանագրով նախատեսված պայմաններով Պատվիրատուի (Հաճախորդի) առաջադրանքով մատուցել սույն պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն (Հաճախորդը) պարտավորվում է սույն պայմանագրով նախատեսված պայմաններով ընդունել ծառայությունները և վճարել դրանց դիմաց:
- 1.2 Ընկերությունը պարտավորվում է սույն պայմանագրով և փոստային կապի ոլորտը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով և պայմաններով Հաճախորդին մատուցել փոստային կապի ծառայություններ, այդ թվում՝ արագընթաց փոստային ծառայություններ (EMS) և հեռագրային ծառայություններ (այսուհետև՝ Շտապայություններ կամ փոստային կապի ծառայություններ): Փոստային կապի ծառայությունների, այդ թվում՝ արագընթաց փոստային ծառայությունների (EMS) և հեռագրային ծառայությունների բնութագրերը սահմանված են փոստային կապի ոլորտը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և դրանց հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով:
- 1.3 Ընկերությունը, որպես Հայաստանի Հանրապետության փոստային կապի ազգային օպերատոր (նշանակված օպերատոր) Փոստային կապի ծառայությունները մատուցելիս առաջնորդվում է փոստային կապի գործունեությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային Հանրապետության միջազգային պայմանագրերով և այլ իրավական ակտերով, որոնցով տվյալ տեսակի ծառայությունների համար սահմանված են ծառայությունների մատուցման որոշակի պայմաններ ու ժամկետներ:

Գլուխ 2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1 Ընկերությունը պարտավոր է՝

- 2.1.1 Շտապայությունները մատուցել պատշաճ որակով՝ սույն պայմանագրի պայմաններին համապատասխան.
- 2.1.2 Շտապայությունները մատուցել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և այլ իրավական ակտերով նախատեսված փոստային կապի ծառայությունների մատուցման պայմաններին համապատասխան.
- 2.1.3 Սույն պայմանագրով սահմանված կարգով Հաճախորդի կողմից Շտապայությունների մատուցման վերաբերյալ գրավոր բողոքներ ստանալու դեպքում, քննարկել դրանք և գրավոր պատասխան ներկայացնել Հաճախորդին ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ.

“HAYPOST” Closed Joint-Stock Company, which was formed in compliance with the laws of the Republic of Armenia, being the National Postal Operator of Armenia registered and is located at the address 22 Saryan street, Yerevan 0002, Republic of Armenia, located at the same address (hereinafter referred to as Executor or Company), represented by Haik Avagyan, Acting Chief Executive Officer, on the one hand and State Nuclear Safety Regulatory Committee by the Government of the RA (hereinafter referred to as Customer or Client) represented by Khachatur Khachikyan, Head of the Staff, on the other hand, signed this Contract as follows:

CHAPTER 1. SUBJECT OF CONTRACT

- 1.1 The Executor (Company) is obliged to render the services under Clause 1.2 of the present Contract at the request of the Customer (Client), and the Customer (Client) is obliged to accept the services under the present Contract and pay for them.
- 1.2 The Company is obliged to provide the Client with postal services in compliance with the conditions and order defined by the present contract, the legislation of the Republic of Armenia, regulating the field of the postal communication, the international agreements and other legal acts of the Republic of Armenia, including the express mail services (EMS) and telegraph services (hereinafter referred to as Services or Postal Services). The specifications of the postal services, including the EMS services and telegraph services are defined in the legislation of the Republic of Armenia regulating the postal field, the international agreements of the Republic of Armenia and other legal acts based on them.
- 1.3 The Company, as the National Postal Operator of the Republic of Armenia (Designated Operator), while providing the Services of postal communication, shall be guided by the legislation of the Republic of Armenia, regulating the postal communication activity, the international agreements and other legal acts of the Republic of Armenia, which define certain terms and conditions of provision of services for the given kind of services.

CHAPTER 2. RIGHTS AND OBLIGATIONS OF THE PARTIES

2.1 The Company is obliged to:

- 2.1.1 Provide the Services in the proper quality, according to the conditions of this Contract;
- 2.1.2 Provide the Services in compliance with the conditions envisaged for provision of postal services under the Legislation of the Republic of Armenia, international agreements and other legal acts of the Republic of Armenia;
- 2.1.3 In case of the receipt of written complaints from the Client concerning the provision of Services, in the procedure defined under the present Contract, discuss them and submit a written reply to the Client on the measures undertaken;

- 2.1.4 Հաճախորդի ցանկությանը պարզաբանումներ ներկայացնել Շառայությունների մատուցման պայմանների և ժամկետների վերաբերյալ:
- 2.1.5 Սույն պայմանագրով նախատեսված փոստային կապի ծառայությունների մատուցման սակագների փոփոխությունների դեպքում, այդ բոլոր Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավասու պետական մարմնի կողմից փոստային կապի ունիվերսալ ծառայությունների սակագների սահմանման (փոփոխման) դեպքում ապահովել նշված փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը Հաճախորդին՝ սույն պայմանագրով սահմանված պայմաններով:
- 2.1.6 Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով փոստային կապի ծառայությունների մատուցման պայմաններում փոփոխություններ կատարվելու դեպքերում ապահովել համապատասխան փոփոխությունների վերաբերյալ իրազեկումը Հաճախորդին՝ սույն պայմանագրով սահմանված պայմաններով:
- 2.1.7 Կատարել սույն պայմանագրով սահմանված իր այլ պարտավորությունները:

- 2.1.4 Upon the wish of the Client, submit clarifications on the terms and conditions of the provision of Services;
- 2.1.5 In case of changes of the service provision tariffs under the present Contract, including the definition (change) of postal universal service tariffs made by an authorized state body in the procedure defined under the Legislation of the Republic of Armenia, ensure the access to the information about the mentioned changes for the Client, in compliance with the conditions defined under the present Contract;
- 2.1.6 In case of changes made in the conditions of postal service provision by means of international agreements ratified by the Republic of Armenia, or the Legislation or other legal acts of the Republic of Armenia, ensure the awareness of the Client on the corresponding changes made under the conditions defined by the present Contract;
- 2.1.7 Implement other obligations defined by the present Contract.

2.2 Ընկերությունն իրավունք ունի՝

2.2 Company shall have the right to

- 2.2.1 Պահանջել Հաճախորդից՝ սույն պայմանագրով նրա կողմից ստանձնված վճարման և այլ պարտավորությունների պատշաճ կատարում:
- 2.2.2 Ցանկացած ժամանակ առանց լուծելու սույն պայմանագիրը նախնական ծանուցմամբ, միակողմանի, ժամանակավորապես կասեցնել սույն պայմանագրով սահմանված որոշ կամ բոլոր պարտավորությունների կատարումը, եթե Հաճախորդը չի կատարում կամ ոչ պատշաճ կերպով է կատարում Շառայությունների ընդունման, դրանց դիմաց վճարման պարտավորությունները կամ սույն պայմանագրով նախատեսված իր այլ պարտավորությունները: Սույն ենթակետով նախատեսված դեպքերում Ընկերությունն իր ծանուցմամբ սահմանում է այն ժամկետը, որի ընթացքում Հաճախորդը պարտավոր է վերացնել իր կողմից բոլի տրված պայմանագրի պայմանների խախտումները: Եթե Հաճախորդը չի վերացնում խախտումը սույն ենթակետով նախատեսված՝ Ընկերության կողմից ծանուցմամբ սահմանված ժամկետում, Ընկերությունը կարող է լուծել սույն պայմանագիրը և պահանջել Հաճախորդից վնասների հատուցում:
- 2.2.3 Իրականացնել սույն պայմանագրով սահմանված իր այլ իրավունքները:

- 2.2.1 Demand from the Client proper fulfillment of the payment and other obligations undertaken by the present Contract;
- 2.2.2 To cancel anytime unilaterally and temporarily the implementation of certain or all the obligations of the present Contract by a preliminary notification without dissolving the present Contract in case of non-implementation or improper implementation by the Client of the obligations of service acceptance, payment for Services or other obligations envisaged by the present Contract. In the cases envisaged by the present sub clause, the Company defines by its own notification the period, during which the Client is obliged to eliminate the breaches made in the terms of the Contract. In case of non-elimination of the breach in the period defined by the Company's notification envisaged by this sub clause, the Company may dissolve the present Contract and demand the Client to compensate the damages;
- 2.2.3 Realize other rights as stipulated in this Contract.

2.3 Հաճախորդը պարտավոր է՝

2.3 The Client is obliged to

- 2.3.1 Սույն պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով ընդունել Ընկերության կողմից մատուցված Շառայությունները և վճարել դրանց դիմաց՝ Ընկերության սահմանած Շառայությունների գների (սակագների) համապատասխան, իսկ փոստային կապի ունիվերսալ ծառայությունների համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իրավասու պետական մարմնի կողմից սահմանված սակագներին համապատասխան:
- 2.3.2 Ընկերության կողմից մատուցվող Շառայությունների որակի կամ այլ պայմանների վերաբերյալ բողոքներ ունենալու դեպքերում անհապաղ տեղեկացնել դրանց մասին Ընկերությանը՝ պահպանելով սույն պայմանագրի 5.3 կետով և 2.3.3 ենթակետով սահմանված պայմանները:
- 2.3.3 Որևէ սխալ կամ ոչ հավաստի (չճշտված), ինչպես նաև առևտրային գաղտնիք հանդիսացող տեղեկություն չտարածել:

- 2.3.1 Accept the Services rendered by the Company and pay against those as stipulated under the terms and conditions of this Contract, in accordance with the prices (tariffs) of Services defined by the Company, and in case of universal postal services, in accordance with the tariffs defined by the authorized state body, assigned by the Legislation of the Republic of Armenia;
- 2.3.2 In case of having complaints against the quality or other conditions of the Services provided by the Company, inform the Company thereof without delay, implementing the conditions under Clause 5.3 and Sub-Clause 2.3.3 of this Contract;
- 2.3.3 Not to disseminate any incorrect or unauthentic (unverified) information (by public or non-public means)

- (հրապարակային կամ ոչ հրապարակային եղանակով) Ընկերության և Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների որակի և այլ պայմանների վերաբերյալ:
- 2.3.4 Պահպանել փոստային կապի ծառայություններից օգտվողների համար «Փոստային կապի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված կանոնները, այդ թվում առարանիների ներդրանքին և այլ պայմաններն վերաբերող կանոնները:
- 2.3.5 Կատարել սույն պայմանագրով սահմանված իր այլ պարտավորությունները:

concerning the Company and the quality and other conditions of the Services rendered by the Company;

- 2.3.4 To fulfill the rules envisaged for the users of postal services by RA Law "On Postal Communication" and by the international agreements of the Republic of Armenia, including the rules concerning the items' insert and other conditions;
- 2.3.5 Implement other obligations undertaken by the present Contract.

2.4. Հաճախորդն իրավունք ունի՝

- 2.4.1 Պահանջել Ընկերությունից ծառայությունները մատուցել ժամանակին և պատշաճ կարգով՝ սույն պայմանագրի պայմաններին համապատասխան:
- 2.4.2 Տեղեկատվություն ստանալ մատուցված ծառայությունների կամ ծառայությունների մատուցման ընթացքի վերաբերյալ:
- 2.4.3 Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավասու պետական մարմնի կողմից փոստային կապի ունիվերսալ ծառայությունների սակագների սահմանման (փոփոխման) կամ սույն պայմանագրով մատուցվող փոստային կապի այլ ծառայությունների սակագների Ընկերության կողմից փոփոխման հետ համաձայն չլինելու դեպքում լուծել սույն պայմանագիրը՝ նախապես կատարելով վերջնահաշվարկ և այդ մասին նախապես 5-օրյա ժամկետում գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:
- 2.4.4 Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով փոստային կապի ծառայությունների մատուցման պայմաններում փոփոխություններ կատարվելու դեպքերում՝ կատարված փոփոխությունների հետ համաձայն չլինելու հիմքով լուծել սույն պայմանագիրը՝ նախապես կատարելով վերջնահաշվարկ և այդ մասին նախապես 5-օրյա ժամկետում գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:
- 2.4.5 Իրականացնել սույն պայմանագրով սահմանված իր այլ իրավունքները:

2.4 The Client shall have the right to

- 2.4.1 Demand from the Company to render the Services in a timely and proper manner, in accordance with the conditions under this Contract;
- 2.4.2 Receive information on the Services provided or the progress of the Services provided;
- 2.4.3 In case of not agreeing with the definition (change) of the universal postal service tariffs made an the authorized state body, in the procedure under the Legislation of the RA, or change of tariffs of other postal services provided under this Contract, made by the Company, dissolve this Contract, making a final settlement prior to that and informing the Company within 5 days in advance;
- 2.4.4 In case of not agreeing with the changes in the conditions of the postal service provision according to international agreements ratified by the Republic of Armenia or the Legislation or other legal acts of the Republic of Armenia, dissolve this contract on the basis of not agreeing, making final settlement prior to that and informing the Company within 5 days in advance;
- 2.4.5 Realize other rights as stipulated in this Contract.

Գլուխ 3. Ծառայությունների համձուռ-ընդունումը, Պայմանագրի գինը, Ծառայությունների մատուցման գները (սակագները) և վճարման կարգը

CHAPTER 3. DELIVERY AND ACCEPTANCE OF THE SERVICES, SERVICE PRICES (TARIFFS) AND PAYMENT PROCEDURE

- 3.1 Սույն պայմանագրով նախատեսված փոստային կապի ծառայությունների, այդ թվում Արագընթաց փոստային ծառայությունների (EMS) և հեռագրային ծառայությունների մատուցման գները (սակագները) սահմանվում և (կամ) փոփոխվում են Ընկերություն կողմից, իսկ փոստային կապի ունիվերսալ ծառայությունների մատուցման սակագները սահմանվում և (կամ) փոփոխվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իրավասու պետական մարմնի կողմից: Սույն կետում նշված գները (սակագները) Հաճախորդին տրամադրվում են Ընկերության ինտերնետային կայքի (www.haypost.am հասցեով) կամ Ընկերության փոստային բաժանմունքների միջոցով: Գների (սակագների) հետագա փոփոխությունների դեպքում Հաճախորդը տեղեկացվում է այդ մասին սույն պայմանագրով սահմանված կարգով:
- 3.2 Սույն պայմանագրի առավելագույն գինը սահմանվում է **50 000 (հիստոմ հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն**: Սույն կետում նշված գումարը ներառում է Ընկերության կողմից իրականացվող բոլոր ծախսերը: Սույն կետով նախատեսված գումարի չբացահայտված Հաճախորդն իրավունք ունի առանց սահմանափակումների

- 3.1 The prices (tariffs) of the postal services envisaged by this Contract, including the express mail services (EMS) and telegraph services, shall be defined and (or) changed by the Company, and the universal postal service provision tariffs shall be defined and (or) changed by an authorized state body assigned by the Legislation of the Republic of Armenia. The prices (tariffs) under this sub clause shall be provided to the Client by means of the Company's website (address: www.haypost.am) or the Company's post offices. In case of further changes of the prices (tariffs) the Client shall be informed about it in compliance with the procedure under this Contract.
- 3.2 The maximum price of this Contract is determined **50 000 AMD, VAT included**. The present amount includes all the costs undertaken by the Company. The Client has the right to use all the Services provided by the Company under the present Contract with no restrictions, in the frames of the amount envisaged by this Clause.

- օգտվել ընկերության կողմից մատուցվող՝ սույն պայմանագրով նախատեսված ծառայություններից: Միանգամյա առաքումների բանակներով պայմանավորված (մեծածավալ առաքումների դեպքում) Ընկերությունն իրավունք ունի Հաճախորդին առաջարկել օգտվելու մեծածավալ փոստի ընդունման համար նախատեսված ընկերության մասնագիտացված փոստային բաժանմունքներից:
- 3.3 Սույն պայմանագրով նախատեսված փոստային կապի ծառայության դիմաց վճարումը հավաստված է, եթե փոստային առաքանու վրա փակցված է համապատասխան նամակահիշ, և տվյալ առաքանին ընդունվել է Ընկերության կողմից:
- 3.4 Սույն պայմանագրի գործողության ընթացքում փոստային կապի ծառայություններից օգտվելու նպատակով Հաճախորդը ցանկացած ժամանակ իրավունք ունի դիմել և Ընկերությունից ստանալ նամակահիշեր և/կամ ծրարներ՝ նախապես վճարելով դրանց դիմաց:
- 3.5 Փոստային նամակահիշեր և/կամ ծրարներ, ձեռք բերելու նպատակով Հաճախորդը հայտ է ներկայացնում Ընկերությանը, որի ձևը կցված է սույն պայմանագրին որպես Հավելված 1: Ընկերությունը բավարարում է Հաճախորդի հայտը և վերջինիս տրամադրում է պատվիրված նամակահիշերը, փոստային վճարման այլ միջերը և/կամ ծրարները, եթե ծառայություններից օգտվելու նպատակով Հաճախորդի կատարած կանխավճարը բավարարում է պատվերն իրականացնելու համար: Սույն կետով նախատեսված հայտը Հաճախորդի կողմից կարող է ներկայացվել փաստաթղթային եղանակով՝ փոստային առաքման կամ առձեռն հանձնելու միջոցով, կամ էլեկտրոնային եղանակով՝ սույն պայմանագրում նշված Հաճախորդի էլեկտրոնային փոստի հասցեից Ընկերության էլեկտրոնային փոստի հասցեին հայտի սրանավորված պատճեն ուղարկելու միջոցով:
- 3.6 Սույն պայմանագրով նախատեսված բոլոր տեսակի ծառայություններից օգտվելու նպատակով յուրաքանչյուր ամսվա համար Հաճախորդն Ընկերության՝ սույն պայմանագրով նշված բանկային հաշվին փոխանցում է կանխավճար, որի չափը որոշվում է Հաճախորդի կողմից՝ տվյալ ամսվա ընթացքում պատվիրվող ծառայությունների կանխատեսվող արժեքին համապատասխան: Կանխավճարի սպառվելու դեպքում Ընկերությունը ժամանակավորապես կասեցնում է ծառայությունների մատուցումը՝ մինչև Հաճախորդի կողմից կանխավճարի փոխանցումն Ընկերությանը:
- 3.7 Սույն պայմանագրի շրջանակներում Հաճախորդի առաջարկությանը Ընկերությունը կարող է համաձայնություն տալ ծառայությունների մատուցումն իրականացնել կանխավճարի սպառված լինելու դեպքում, եթե Հաճախորդի կողմից վճարման ժամկետի վերաբերյալ ներկայացված գրավոր առաջարկությունն ընդունվել է Ընկերության կողմից: Սույն կետով սահմանված դեպքում վճարման վերջնաժամկետը լրանալուց հետո Ընկերությունը կարող է կասեցնել ծառայությունների մատուցումը և պահանջել Հաճախորդից վճարել մատուցված ծառայությունների դիմաց, ինչպես նաև Հաճախորդի նկատմամբ կիրառել տույժ՝ սույն պայմանագրով սահմանված չափերով:
- 3.8 Յուրաքանչյուր ամսվա ընթացքում մատուցված ծառայությունների համար՝ մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 10-րդ աշխատանքային օրը Ընկերությունը կազմում է Հաճախորդին է ներկայացնում ծառայությունների մատուցման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը սահմանված համապատասխան հաշվարկային փաստաթուղթ (հարկային հաշիվ) և հաշվետու ամսվա ընթացքում մատուցված ծառայությունների վերաբերյալ հաշվետվություն, որում առանձին տողով նշվում է Հաճախորդի տրամադրած կանխավճարից կատարված նվազեցման մասին տեղեկատվություն: Մատուցված ծառայությունների վերաբերյալ հաշվետվությունը կազմվում է հաշվետու ամսվա ընթացքում Ընկերության և Հաճախորդի միջև ստորագրված առաքանիների հանձնման-ընդունման վերաբերյալ համապատասխան փաստաթղթերի հիման վրա:
- 3.9 Ներկայացված հաշվարկային փաստաթուղթը ենթակա է
- Depending on the quantities of one-time deliveries (in case of sizeable items), the Company has the right to propose the Client to use the services of the Company's specialized post offices, meant to accept sizeable post.
- 3.3 The payment for postal services determined by this Contract is certified if there is a relevant stamp on the postal item and the given item has been accepted by a post office.
- 3.4 For the effective period of this Contract, in order to receive postal services, the Client shall have the right to apply for and receive stamps and/or envelopes from the Company anytime by paying for them in advance.
- 3.5 In order to purchase postage stamps and/or envelopes, The Client submits an application to the Company, the sample of which is attached to this Contract, in the Annex 1. The Company approves the Client's application and provides the Client with the required stamps, other postage marks and/or envelopes, if the prepayment made by the Client in order to use the Services suffices for the implementation of the application. The application envisaged by this Clause can be submitted by the Client in paper, by means of postal or hand delivery, or via e-mail, by sending the scanned version of the application from the Client's e-mail mentioned in this Contract to the Company's e-mail.
- 3.6 For all the Services envisaged by the present Contract the Client shall transfer a prepayment for each month to the Company's bank account mentioned in this Contract. The prepayment amount is defined by the Client, according to the expected value of the Services ordered for the given month. If the whole prepayment is spent, the Company temporarily cancels the provision of Services, till the Client transfers the prepayment to the Company.
- 3.7 Within the framework of this Contract, the Company can agree to carry out the provision of Services at the Client's proposal while the prepayment is spent, if the written proposal concerning the payment deadline submitted by the Client has been accepted by the Company. In the case envisaged by this Clause, after the expiration of the payment deadline the Company can cancel the provision of Services and demand the Client to pay for the Services provided, as well as subject the Client to penalty at the rate envisaged by this Contract.
- 3.8 The Company compiles and submits to the Client before the tenth business day of the following month a corresponding settlement document about the provision of Services (invoice) envisaged by the Legislation of the Republic of Armenia and a report concerning the services provided during the month under report for the Services provided during each month. The report includes a separate row containing information about the amount reduced from the prepayment provided by the Client. The report concerning the provided Services is being compiled during the month under report, on the basis of the corresponding documents about the delivery and acceptance of items, signed between the Company and the Client.
- 3.9 The submitted settlement document is subject to be approved by the Client within 3 (three) business days

հաստատման Հաճախորդի կողմից՝ այն ստանալուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվարկային վաստաբերում անհամապատասխանություններ հայտնաբերվելու դեպքում Հաճախորդը պարտավոր է այդ մասին գրավոր ծանուցել ԸՆԿերությանը 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում: Կողմերը պարտավորվում են քննարկել այդ անհամապատասխանությունները Հաճախորդի համապատասխան գրավոր ծանուցումն ԸՆԿերության կողմից ստանալու պահից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում: Անհամապատասխանությունների ճշգրտման վերաբերյալ համաձայնություն ձեռք բերելու դեպքում Հաճախորդը հաստատում է հաշվարկային վաստաբերում ու ուղարկում է դրանով օրինակն ԸՆԿերությանը՝ ոչ ուշ քան համաձայնության գալու օրվան հաջորդող 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում: Էլեկտրոնային եղանակով հաշվարկային վաստաբերում (հարկային հաշիվ) դուրս գրելու դեպքում գործընթացներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

- 3.10 Սույն պայմանագրի շրջանակներում փոստային կապի, այդ թվում՝ Արագընթաց փոստային ծառայության (EMS) միջոցով առաքվող փոստային առաքանիքների հանձնում-ընդունումն իրականացվում է ԸՆԿերության համապատասխան փոստային րաժանմունքներում, որոնց ցանկը հրատարակված է ԸՆԿերության ինտերնետային կայքում և կարող է տրամադրվել Հաճախորդին վերջինիս կողմից նման պահանջ ներկայացվելու դեպքում:
- 3.11 Առաքանիքների հանձնման-ընդունման արդյունքում Կողմերը ստորագրում են ԸՆԿերության կողմից սահմանված ձևի փաստաթուղթ, որի մեկ օրինակը տրվում է Հաճախորդին:
- 3.12 Սույն պայմանագրով Հաճախորդը պարտավորվում է իր կողմից՝ սույն պայմանագրի շրջանակներում ձեռք բերված նամակահիշերն ու փոստային վճարման այլ նիշերն օգտագործել բացառապես փոստային կապի ծառայություններից օգտվելու նպատակով:

Գլուխ 4. Կողմերի պատասխանատվությունը

- 4.1 Պայմանագրային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված նորմերին համապատասխան: ԸՆԿերությունը, որպես Հայաստանի Հանրապետության փոստային կապի ազգային օպերատոր, փոստային ծառայությունների մատուցման առնչությամբ պատասխանատվություն է կրում բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով և միջազգային պայմանագրերով սահմանված կարգով և պայմաններով: Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքերում կիրառվող տույժերի և տուգանքների չափերը չեն կարող պակաս լինել պետական գնումների գործընթացը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված տուգանքների չափերից:
- 4.2 ԸՆԿերությունը պատասխանատվություն չի կրում, եթե հասցեատիրոջը փոստային առաքանիքները չեն առաքվել ոչ ստույգ և/կամ ոչ վիսրժեք առարման հասցեի, հասցեի փոփոխության, ինչպես նաև հասցեատիրոջ բացակայության կամ ԸՆԿերությունից անկախ այլ պատճառով: Փոստային առաքանու վնասվելու կամ կորստի դեպքերում, Հաճախորդի իրավունքների իրականացումը կատարվում է փոստային կապի ծառայությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:
- 4.3 Սույն պայմանագրով պարտավորություններն անբողոքյամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհարցահարկի ուժի

after having received it. In case of revealing discrepancies in the settlement document, the Client shall inform the Company about it in written within 3 (three) business days. The Parties undertake to discuss the mentioned discrepancies within 3 (three) business days after having received the corresponding written notification of the Client.

In case of coming to agreement concerning the correction of discrepancies, the Client approves the settlement document and sends one of its copies to the Company not later than on the 3rd (third) business day after coming to agreement.

In case of issuing the settlement document (invoice) in electronic version, the processes are carried out in compliance with the procedure envisaged by the Legislation of the Republic of Armenia.

- 3.10 The acceptance and delivery of postal items delivered by means of postal communication, including express mail service (EMS), within the framework of this contract, are carried out at the Company's relevant post offices, the list of which is presented on the Company's website and can be provided to the Client at the latter's request.
- 3.11 As a result of the delivery and acceptance of items, the Parties sign a document defined by the Company, a copy of which shall be issued to the Client.
- 3.12 Under this Contract the Client shall be obliged to use stamps and other marks of postal payment purchased within the framework of this Contract solely for postal services.

CHAPTER 4. RESPONSIBILITY OF THE PARTIES

- 4.1 The Parties shall be held liable for non-fulfillment or improper fulfillment of their contractual obligations in compliance with the Laws of the Republic of Armenia and norms defined in the international agreements of the Republic of Armenia. As national postal operator of the Republic of Armenia, the Company is held liable for provision of postal services solely in compliance with the procedure and conditions determined by the Laws and international agreements of the Republic of Armenia. The fines and penalties applied in case of the non-fulfillment or improper fulfillment of the obligations under this Contract cannot be less than the penalties defined by the legislation of the Republic of Armenia, regulating the process of state procurements.
- 4.2 The Company is not held liable if the postal items have not been delivered to the addressees for the reason of unclear and/or incomplete delivery address, if the address has been changed, as well as the addressee's absence or any other reason not depending on the Company. In cases of damage or loss of the postal item, the Client's rights are fulfilled in the procedure under the RA Legislation regulating postal services, international agreements and other legal acts of the RA.
- 4.3 The Parties shall be released from any liability for non-fulfillment or partial fulfillment of their obligations under this Contract, if it has been caused due to a force majeure

հանգամանքների ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել և կանխարգելել:

4.4 Սույն պայմանագրով ստանձնած փոստային կապի ծառայությունները ոչ պատշաճ մատուցելու, այն է՝ փոստային առաքանու կորստի, վնասվածքի կամ ներհանրապետական ծառայությունների դեպքում՝ առաքման հսկիչ ժամկետները խախտելու դեպքերում, Ընկերությունը պատասխանատվություն է կրում «Փոստային կապ մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով, իսկ միջազգային փոստային կապի ծառայությունների դեպքում՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված կարգով:

Հաճախորդի կողմից սույն պայմանագրի 3.7 կետով նախատեսված՝ կողմերի համաձայնությամբ սահմանված ժամկետի խախտման դեպքում Ընկերությունը կարող է Հաճախորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացած օրվա համար հաշվարկել սույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.05%-ի չափով:

Տույժերի և /կամ/ տուգանքի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները ամբողջությամբ կատարելու պարտավորությունից:

4.5 Այն դեպքում, երբ «Գնումների մասի» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման հսկողության և/կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև սույն պայմանագրի կնքումը Ընկերությունը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր /տեղեկություններ և ավյալներ/, որի արդյունքում Ընկերությանը հարյուր ճանաչելու /ընտրելու/ մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ կիմքերը ի հայտ գալուց հետո Հաճախորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծել սույն պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն կիմք կհանդիսանալին սույն պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, սույն կետով նախատեսված պայմանագրի միակողմանի լուծման դեպքում, Հաճախորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Ընկերության համար առաջացող վնասների կամ քաջ բողմված օգուտի ռիսկը, իսկ Ընկերությունը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել Հաճախորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը սույն պայմանագրի կատարմամբ Հաճախորդի առաջվածով:

4.6 Փոստային կապի, այդ թվում՝ Արագընթաց փոստային կապի (EMS) ծառայությունների միջոցով արտասահմանյան երկրներ ուղարկվող առաքանիների անցման մուտավոր ժամկետները հրապարակվում են Ընկերության ինտերնետային կայքում կամ կարող են տրամադրվել Հաճախորդին Ընկերության համապատասխան փոստային բաժանմունքների միջոցով: Սույն կետում նշված առաքանիների անցման ժամկետների համար Ընկերությունը պատասխանատվություն չի կրում, քացառությամբ Հայաստանի Հանրապետության առաքածում առաքանիների անցման հսկիչ ժամկետների խախտման դեպքերի: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում նաև այլ պետությունների, այդ թվում՝ տարանցիկ կամ նշանակված վայրի պետությունների փոստային կապի նշանակված (ազգային) օպերատորների կողմից առաքանիների անցման ժամկետների (սույալ պետություններում գործող հսկիչ ժամկետների) խախտման համար:

4.7 Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների մարտային մարմինների կողմից փոստային առաքանու անցումն արգելելու համար, այդ թվում՝ առաքանու մուտքը սույալ պետության տարածք արգելելու, առաքանին առգրավելու կամ բռնագրավելու կամ առաքանին

event, appeared after the conclusion of the present Contract and impossible to be prevented or envisaged by the Parties.

